Երկրորդ ընթերցում

(Լրամշակված նախագիծ)

Կ-485-03.01.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 10. Քաղաքաշինության բնագավառում Կառավարության իրավասությունը*

1.Կառավարությունը քաղաքաշինության բնագավառում՝

1) հաստատում է քաղաքաշինական եւ տարածքային զարգացման հանրապետական եւ մարզային պետական ծրագրերը.

2) հաստատում է սույն օրենքի 17-րդ հոդվածի չորրորդ մասի «ա» եւ «բ» կետերով սահմանված, ինչպես նաեւ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ այլ քաղաքաշինական փաստաթղթերը.

3) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների, տրանսպորտային ենթակառուցվածքների մատչելիության ապահովմանն ուղղված ծրագրերը, սահմանում է առաջնահերթություններ.

4) հաստատում է տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական եւ արտադրական նշանակության շենքերը եւ շինությունները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու կարգը.

5) հաստատում է շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննության եւ անձնագրավորման կարգերը.

6) հաստատում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման եւ հաստատման կարգը.

7) սահմանում է հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության կարգը՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում.

8) հաստատում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հաստատման, տարածքային հատակագծման ուրվագծի, գլխավոր հատակագծերի նախագծման կարգերը.

9) հաստատում է քաղաքաշինական ծրագրային եւ ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության կարգերը.

10) մշակում է շինարարության ոլորտում գնագոյացման քաղաքականությունը, հաստատում է գնագոյացման նախահաշվային նորմերը եւ դրանց կիրառման կարգերը.

11) հաստատում է շինարարական աշխատանքների (արտադրության) կազմակերպման եւ դրանց նկատմամբ տեխնիկական ու հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման կարգերը.

12) հաստատում է քաղաքաշինական գործունեության իրականացման (ճարտարապետահատակագծային առաջադրանքի, նախագծային առաջադրանքի, շինարարության եւ քանդման կամ ապամոնտաժման թույլտվությունների, շինարարության ավարտական ու շահագործման ակտերի տրամադրման, ծրագրային եւ ճարտարապետաշինարարական փաստաթղթերի մշակման, համաձայնեցման եւ փորձաքննության) կարգերը.

13) հաստատում է շենքերի եւ շինությունների սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) բարելավման գործողությունների իրականացման ծրագիրը.

14) հաստատում է պետական մասնակցությամբ իրականացվող քաղաքաշինական կառուցապատման եւ քաղաքաշինական ժառանգության պահպանման, վերաօգտագործման ու արդիականացման ծրագրեր:

15) հաստատում է ըստ ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտների դասակարգման ցանկերն ու մեթոդաբանությունը, շինարարության թույլտվություն պահանջող եւ չպահանջող աշխատանքների ու ծառայությունների ցանկերը.

16) հաստատում է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության եւ բնակարանների արտահերթ հատկացման կարգերը, նրանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով իրականացվող բնակապահովման ծրագրերի աշխատանքները կազմակերպող հանձնաժողովի կանոնակարգը, սահմանում է այդ ընտանիքների վերահաշվառման եւ նրանց կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը.

17) հաստատում է բնակելի, հասարակական եւ արտադրական շենքերի եւ շինությունների՝ ըստ նպատակային և գործառնական նշանակության դասակարգման ցանկը (մեթոդաբանությունը), շենքերի եւ շինությունների կամ դրանց մի հատվածի նպատակային (գործառնական) նշանակության փոփոխման կարգերը.

18) սահմանում է ուժեղացման եւ վերակառուցման եւ քանդման ենթակա վթարային բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը, բնակարանային ֆոնդի ուժեղացման եւ վերակառուցման կամ քանդման դեպքում այդ ֆոնդից քաղաքացիների ժամանակավոր վերաբնակեցման կարգը, բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման եւ հետազննության արդյունքում տրված եզրակացությունների վարման, բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու կարգերը.

19) կառուցապատողի կողմից ներկայացված առաջարկի հիման վրա հաստատում է հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրերի շրջանակներում բազմաբնակարան շենքերից կամ շենքային համալիրներից բնակարանների եւ ավտոկայանատեղիների վաճառքի կարգը.

20) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի ու շինությունների՝ այդ թվում գծային ենթակառուցվածքների՝ մայրուղային, երկաթուղային եւ ավտոմոբիլային ճանապարհների, գազատարների, կապի եւ էլեկտրամատակարարման գծերի կամ դրանց հատվածների բազմակի օգտագործման օրինակելի ճարտարապետաշինարարական նախագծերի եւ դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը.

21) հաստատում է հավաստագրման, վերաորակավորման եւ թեստավորման կարգը, հավաստագրերի ձեւերը, լիցենզավորված անձանց եւ հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձեւավորման, տվյալների փոփոխության, լրացման, գրանցամատյանի վարման կարգը, գրանցամատյանից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկը, լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման եւ մոնիթորինգի իրականացման կարգը.

22) հաստատում է քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող աշխատանքների եւ ծառայությունների ցանկերը.

23) հաստատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ՝ նաեւ ՇՄԶ) կազմակերպման եւ հավաստագրման հնգամյա ժամանակացույցը.

24) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրյա մասնագետների եւ կազմակերպությունների՝ կարճաժամկետ քաղաքաշինության գործունեության թույլտվության տրամադրման կարգը.

25) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները.

26) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ծրագրում Կառավարության կողմից սահմանվում են ծրագրի հիմնական պայմանները: Այդ պայմանների կենսագործումն ապահովելու նպատակով ծրագրում նշված լիազոր մարմնի և ծրագիրն իրականացնողի միջև օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է համապատասխան պայմանագիր, որում ներառում են այդ թվում Կառավարության կողմից հաստատված ծրագրի հիմնական պայմանները և դրանց խախտման համար օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքները:»:

Հոդված 2. Օրենքի 10.1 հոդվածի՝

1. վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը»:

2. 1-ին մասը խմբագրել հետեւյալ բովանդակությամբ.

«1. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը Քաղաքաշինության կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե): »:

3. 3-րդ մասի 24-րդ կետը խմբագրել հետեւյալ բովանդակությամբ.

«24) քաղաքացիական պաշտպանության եւ զորահավաքային նախապատրաստության բնագավառում մշակում է պլաններ, կազմակերպում է կոմիտեի զորահավաքային ռեսուրսների հաշվառումը եւ քաղաքացիական պաշտպանության բնագավառի քաղաքաշինական գործունեությանն առնչվող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքները .»:

4. 3-րդ մասի 27-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«27) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված մասնագիտական գործունեության տեսակներին և ենթատեսակներին համապատասխան պահանջվող մասնագիտական որակավորումների ցանկը.

5. 3-րդ մասը լրացնել 28-48 կետերով.

28) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների եւ ծառայությունների մատուցման

գործելակարգերը եւ պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը.

29) հաստատում է որակավորման, էթիկայի եւ որակի գնահատման հանձնաժողովների անհատական կազմը, աշխատակարգը, անդամների ընտրության եւ գործերի քննության կարգերը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձեւը.

30) հաստատում է լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության եւ մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձեւերը, թեստավորման հարցաշարերը, հայտարարության տեքստին ներկայացվող պահանջները.

31) հաստատում է ՇՄՋ ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը եւ մասնակցությանը ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող ՇՄՋ կրեդիտների տեսակները, քանակը եւ դրանց շնորհման չափորոշիչները.

32) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինության բնագավառում հավաստագրված մասնագետների գրանցումը.

33) օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է մասնագետների հավաստագրումը եւ հաստատում մասնագետներին տրվող հավաստագրերը.

34) իրականացնում է 1-ին, 2-րդ եւ 3-րդ կարգերի մասնագետների եւ 1-ին, 2-րդ եւ 3-րդ դասերի քաղաքաշինական գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների գրանցամատյանների վարումը, որտեղ առնվազն ներառվում են մասնագետների անհատական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի), կրթության, որակավորման, վերաորակավորման, մասնագիտացման, մասնագիտական գործունեության եւ ՇՄՋ հավաստագրերի, լիցենզավորված անձի տվյալների (անվանում եւ գտնվելու վայր, ազգանուն, անուն, բնակության վայր եւ հաշվառման հասցե), լիցենզիայի գործունեության տեսակի, գործողության ժամկետի, գործողության ժամկետների երկարաձգման, լիցենզիայի,

ներդիրի կամ հավաստագրերի վերաձեւակերպման, գործողության կասեցման, գործողության դադարեցման եւ վարկանիշավորման վերաբերյալ տեղեկություններ, օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ տեղեկություններ.

35) սահմանում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների կողմից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման որակի գնահատման չափորոշիչներ,

36) հաստատում է կառուցվող, հիմնանորոգվող, վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, ընդլայնվող, արդիականացվող, վերազինվող, նորոգվող, քանդվող կամ ապամոնտաժվող շենքերի, շինությունների, կառուցվածքների եւ շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշները.

37) մշակում եւ հաստատում է քաղաքաշինական գործունեության ապահովման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ, ուղեցույցներ, ձեռնարկներ եւ սահմանում է (տեղայնացնում է) քաղաքաշինության բնագավառում կիրառվող տերմիններ.

38) մշակում է շենքերի եւ շինությունների սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) բարելավման գործողությունների իրականացման ծրագիրը.

39) սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի ու շինությունների՝ այդ թվում տրանսպորտային եւ ինժեներական ենթակառուցվածքների շահագործման մատչելիությունն ապահովող քաղաքաշինական միջոցառումների համալիրը (նորմերը, կանոնները), դրանց կիրառման պայմանները.

40) վարում է քաղաքաշինության բնագավառի լիցենզավորված կազմակերպությունների եւ մասնագետների էլեկտրոնային գրանցամատյանները.

41) մշակում է բնակելի, հասարակական եւ արտադրական շենքերի եւ շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը եւ բովանդակությունը, ինչպես նաեւ դրանց նպատակային (գործառնական) նշանակության դասակարգման ցանկը (մեթոդաբանությունը), շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակության եւ դրանց փոփոխման կարգերը.

42) մշակում է տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական եւ արտադրական նշանակության շենքերը եւ շինությունները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու կարգը.

43) մշակում է եւ հաստատում է շենքերի ու շինությունների անձնագրերի օրինակելի ձեւերը, անձնագրերի լրացման մեթոդաբանությունը.

44) մշակում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման եւ հաստատման կարգը.

45) մշակում է քաղաքաշինական ծրագրային եւ ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության կարգերը.

46) համակարգում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով սահմանված կառուցապատման եւ ներդրումային ծրագրերը.

47) ստեղծում է Կոմիտեի նախագահին կից գործող Քաղաքաշինական խորհուրդը.

48) ստեղծում է Կոմիտեի նախագահին կից գործող Գիտատեխնիկական խորհուրդը:»:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի.

1) 47-րդ կետում նշված Քաղաքաշինական խորհուրդը ճարտարապետաճարտարագիտական, քաղաքաշինական համալիր խնդիրների կոլեգիալ քննարկման և գնահատման նպատակով ստեղծված խորհրդատվական մարմին է, որի կազմը և աշխատակարգը հաստատում է Կոմիտեի նախագահը.

2) 48-րդ կետում նշված Գիտատեխնիկական խորհուրդը քաղաքաշինության բնագավառի օրենսդրությամբ սահմանված նորմերի կիրառման հետ կապված գիտականորեն հիմնավորված մասնագիտական դիրքորոշումներ, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծված խորհրդատվական մարմին է, որի կազմը և աշխատակարգը հաստատում է Կոմիտեի նախագահը:»

Հոդված 3. Օրենքի ամբողջ տեքստում «քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին», «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմին» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառի

պետական կառավարման լիազոր մարմին» բառերով՝ դրանց համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 4. Օրենքի ամբողջ տեքստում «նորմատիվ-տեխնիկական» բառերը փոխարինել «նորմատիվատեխնիկական» բառով:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի 10-րդ մասում «10-րդ հոդվածի «դ» կետին» բառերը փոխարինել «10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին» բառերով:

Հոդված 6. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 19. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտները*

1. Քաղաքաշինական գործունեությունը ենթակա է հատուկ կարգավորման, եթե տարածքների կառուցապատումը, հատակագծումը, օգտագործումը, քաղաքացիների, հասարակության, պետության շահերի ապահովումը պահանջում է օրենսդրական լրացուցիչ լուծումներ:

2. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների առանձնացումը որոշվում է՝ ելնելով պետության եւ հասարակության անվտանգության ապահովման, սոցիալ-տնտեսական զարգացման, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների եւ բնապահպանական հիմնահարցերի փոխկապակցված լուծման, ազգային, պատմամշակութային, քաղաքաշինական, լանդշաֆտային եւ բնապատկերային արժեքների պահպանման, բնական եւ տեխնածին երեւույթներից պաշտպանության, աղետների եւ արտակարգ իրավիճակների կանխման ու հետեւանքների վերացման անհրաժեշտությունից:

3. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանները կարող են չհամընկնել վարչատարածքային միավորների սահմանների հետ:

4. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորումը կարող է իրականացվել հատուկ քաղաքաշինական նորմերի ու կանոնների, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, համաձայնեցման եւ հաստատման, ինչպես նաեւ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգեր սահմանելու միջոցով:

5. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ կարող են առանձնացվել՝

1) Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքում.

2) Սեւանա լճի ջրհավաք ավազանի տարածքում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, ինչպես նաեւ ջրային ռեսուրսների օգտագործմանն առնչվող հիդրոտեխնիկական կառուցվածքների տարածքներում.

3) ազատ եւ հատուկ տնտեսական գոտիների տարածքներում.

4) մեկից ավելի վարչատարածքային միավորների շահերին առնչվող քաղաքաշինական օբյեկտների տարածքներում.

5) օրենքով սահմանված հատուկ նշանակության եւ հատուկ պահպանվող հողերի տարածքներում.

6) միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում:

6. Սույն հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների եւ տարածքների, այդ թվում միջպետական եւ հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների պահպանման, ինչպես նաեւ հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում եւ առանձնացման գոտիներում քաղաքաշինական գործունեության, դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման եւ նախագծային փաստաթղթերի հաստատման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը Կառավարությունը եւ կոմիտեն ընդունում են՝

1) մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 30-ը,

2) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի մասով՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը,

3) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 21-23-րդ կետերի և սույն օրենքի 2-րդ հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 27-րդ, 31-րդ կետերի մասով՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 16-ը,

4) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 24-25-րդ կետերի և սույն օրենքի 2-րդ հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 28-30-րդ և 35-րդ կետերի մասով՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 16-ը:»

Երկրորդ ընթերցում

(Լրամշակված նախագիծ)

Կ-485-03.01.2023-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 10. Քաղաքաշինության բնագավառում Կառավարության իրավասությունը*

1.Կառավարությունը քաղաքաշինության բնագավառում՝

1) հաստատում է քաղաքաշինական եւ տարածքային զարգացման հանրապետական եւ մարզային պետական ծրագրերը.

2) հաստատում է սույն օրենքի 17-րդ հոդվածի չորրորդ մասի «ա» եւ «բ» կետերով սահմանված, ինչպես նաեւ ~~Հայաստանի Հանրապետության~~սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ այլ քաղաքաշինական փաստաթղթերը.

3) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների, տրանսպորտային ենթակառուցվածքների մատչելիության ապահովմանն ուղղված ծրագրերը, սահմանում է առաջնահերթություններ.

4) հաստատում է տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական եւ արտադրական նշանակության շենքերը եւ շինությունները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու կարգը.

5) հաստատում է շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննության եւ անձնագրավորման կարգերը.

6) հաստատում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման եւ հաստատման կարգը.

7) սահմանում է հողամասերի նպատակային և (գործառնական) նշանակության փոփոխության կարգերը՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում.

8) հաստատում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հաստատման, տարածքային հատակագծման ուրվագծի, գլխավոր հատակագծերի նախագծման կարգերը.

9) հաստատում է քաղաքաշինական ծրագրային եւ ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության կարգերը.

10) մշակում է շինարարության ոլորտում գնագոյացման քաղաքականությունը, հաստատում է գնագոյացման նախահաշվային նորմերը եւ դրանց կիրառման կարգերը.

11) հաստատում է շինարարական աշխատանքների (արտադրության) կազմակերպման եւ դրանց նկատմամբ տեխնիկական ու հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման կարգերը.

12) հաստատում է քաղաքաշինական գործունեության իրականացման (ճարտարապետահատակագծային առաջադրանքի, նախագծային առաջադրանքի, շինարարության եւ քանդման կամ ապամոնտաժման թույլտվությունների, շինարարության ավարտական ու շահագործման ակտերի տրամադրման, ծրագրային եւ ճարտարապետաշինարարական փաստաթղթերի մշակման, համաձայնեցման եւ փորձաքննության) կարգերը.

13) հաստատում է շենքերի եւ շինությունների սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) բարելավման գործողությունների իրականացման ծրագիրը.

14) հաստատում է պետական մասնակցությամբ իրականացվող քաղաքաշինական կառուցապատման եւ քաղաքաշինական ժառանգության պահպանման, վերաօգտագործման ու արդիականացման ծրագրեր: ~~Ծրագրում սահմանվում են ծրագրի հիմնական պայմանները: Այդ պայմանների կենսագործումն ապահովելու նպատակով ծրագրում նշված լիազոր մարմնի եւ ծրագրի իրականացնողի միջեւ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է համապատասխան պայմանագիր, որում ներառում են այդ թվում Կառավարության կողմից հաստատված ծրագրի հիմնական պայմաններ եւ դրանց խախտման համար օրենսդրությամբ նախատեսված իրավական հետեւանքները.~~

15) հաստատում է ըստ ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտների դասակարգման ցանկերն ու մեթոդաբանությունը, շինարարության թույլտվություն պահանջող եւ չպահանջող աշխատանքների ու ծառայությունների ցանկերը.

16) հաստատում է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության եւ բնակարանների արտահերթ հատկացման կարգերը, նրանց բնակարանային խնդիրների լուծման նպատակով իրականացվող բնակապահովման ծրագրերի աշխատանքները կազմակերպող հանձնաժողովի կանոնակարգը, սահմանում է այդ ընտանիքների վերահաշվառման եւ նրանց կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը.

17) հաստատում է բնակելի, հասարակական եւ արտադրական շենքերի եւ շինությունների՝ ըստ նպատակային և ~~(~~գործառնական~~)~~ նշանակության դասակարգման ցանկը (մեթոդաբանությունը), շենքերի եւ շինությունների կամ դրանց մի հատվածի նպատակային (գործառնական) նշանակության փոփոխման կարգերը.

18) սահմանում է ուժեղացման եւ վերակառուցման եւ քանդման ենթակա վթարային բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը, բնակարանային ֆոնդի ուժեղացման եւ վերակառուցման կամ քանդման դեպքում այդ ֆոնդից քաղաքացիների ժամանակավոր վերաբնակեցման

կարգը, բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման եւ հետազննության արդյունքում տրված եզրակացությունների վարման, բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու կարգերը.

19) կառուցապատողի կողմից ներկայացված առաջարկի հիման վրա հաստատում է հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրերի շրջանակներում բազմաբնակարան շենքերից կամ շենքային համալիրներից բնակարանների եւ ավտոկայանատեղիների վաճառքի կարգը.

20) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի ու շինությունների՝ այդ թվում գծային ենթակառուցվածքների՝ մայրուղային, երկաթուղային եւ ավտոմոբիլային ճանապարհների, գազատարների, կապի եւ էլեկտրամատակարարման գծերի կամ դրանց հատվածների բազմակի օգտագործման օրինակելի ճարտարապետաշինարարական նախագծերի եւ դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը.

21) հաստատում է հավաստագրման, վերաորակավորման եւ թեստավորման կարգը, հավաստագրերի ձեւերը, լիցենզավորված անձանց եւ հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձեւավորման, տվյալների փոփոխության, լրացման, գրանցամատյանի վարման կարգը, գրանցամատյանից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկը, լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման եւ մոնիթորինգի իրականացման կարգը.

22) հաստատում է քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող աշխատանքների եւ ծառայությունների ցանկերը.

23) հաստատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ՝ նաեւ ՇՄԶ) կազմակերպման եւ հավաստագրման հնգամյա ժամանակացույցը.

24) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրյա մասնագետների եւ կազմակերպությունների՝ կարճաժամկետ քաղաքաշինության գործունեության թույլտվության տրամադրման կարգը.

25) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները.

26) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ծրագրում Կառավարության կողմից սահմանվում են ծրագրի հիմնական պայմանները: Այդ պայմանների կենսագործումն ապահովելու նպատակով ծրագրում նշված լիազոր մարմնի և ծրագիրն իրականացնողի միջև օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է համապատասխան պայմանագիր, որում ներառում են այդ թվում Կառավարության կողմից հաստատված ծրագրի հիմնական պայմանները և դրանց խախտման համար օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքները:»:

Հոդված 2. Օրենքի 10.1 հոդվածի՝

2. վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը»:

~~1)~~2. 1-ին մասը խմբագրել հետեւյալ բովանդակությամբ.

«1. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը Քաղաքաշինության կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե): »:

~~2)~~3. 3-րդ մասի 24-րդ կետը խմբագրել հետեւյալ բովանդակությամբ.

«24) քաղաքացիական պաշտպանության եւ զորահավաքային նախապատրաստության բնագավառում մշակում է պլաններ, կազմակերպում է կոմիտեի զորահավաքային ռեսուրսների հաշվառումը եւ քաղաքացիական պաշտպանության բնագավառի քաղաքաշինական գործունեությանն առնչվող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքները .»:

5. 3-րդ մասի 27-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«27) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված մասնագիտական գործունեության տեսակներին և ենթատեսակներին համապատասխան պահանջվող մասնագիտական որակավորումների ցանկը.÷

~~Հոդված 3.~~5. ~~Օրենքի 10.1 հոդվածի~~ 3-րդ մասը լրացնել ~~27~~28-4~~7~~8 կետերով.

~~«27) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված մասնագիտական գործունեության տեսակներին եւ ենթատեսակներին համապատասխան պահանջվող մասնագիտական որակավորումների ցանկը.~~

28) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների եւ ծառայությունների մատուցման գործելակարգերը եւ պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը.

29) հաստատում է որակավորման, էթիկայի եւ որակի գնահատման հանձնաժողովների անհատական կազմը, աշխատակարգը, անդամների ընտրության եւ գործերի քննության կարգերը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձեւը.

30) հաստատում է լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության եւ մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձեւերը, թեստավորման հարցաշարերը, հայտարարության տեքստին ներկայացվող պահանջները.

31) հաստատում է ՇՄՋ ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը եւ մասնակցությանը ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող ՇՄՋ կրեդիտների տեսակները, քանակը եւ դրանց շնորհման չափորոշիչները.

32) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինության բնագավառում հավաստագրված մասնագետների գրանցումը.

33) օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է մասնագետների հավաստագրումը եւ հաստատում մասնագետներին տրվող հավաստագրերը.

34) իրականացնում է 1-ին, 2-րդ եւ 3-րդ կարգերի մասնագետների եւ 1-ին, 2-րդ եւ 3-րդ դասերի քաղաքաշինական գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների գրանցամատյանների վարումը, որտեղ առնվազն ներառվում են մասնագետների անհատական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի), կրթության, որակավորման, վերաորակավորման, մասնագիտացման, մասնագիտական գործունեության եւ ՇՄՋ հավաստագրերի, լիցենզավորված անձի տվյալների (անվանում եւ գտնվելու վայր, ազգանուն, անուն, բնակության վայր եւ հաշվառման հասցե), լիցենզիայի գործունեության տեսակի, գործողության ժամկետի, գործողության ժամկետների երկարաձգման, լիցենզիայի, ներդիրի կամ հավաստագրերի վերաձեւակերպման, գործողության կասեցման, գործողության դադարեցման եւ վարկանիշավորման վերաբերյալ տեղեկություններ, օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ տեղեկություններ.

35) սահմանում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների կողմից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման որակի գնահատման չափորոշիչներ,

36) հաստատում է կառուցվող, հիմնանորոգվող, վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, ընդլայնվող, արդիականացվող, վերազինվող, նորոգվող, քանդվող կամ ապամոնտաժվող շենքերի, շինությունների, կառուցվածքների եւ շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշները.

37) մշակում եւ հաստատում է քաղաքաշինական գործունեության ապահովման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ, ուղեցույցներ, ձեռնարկներ եւ սահմանում է (տեղայնացնում է) քաղաքաշինության բնագավառում կիրառվող տերմիններ.

38) մշակում է շենքերի եւ շինությունների սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) բարելավման գործողությունների իրականացման ծրագիրը.

39) սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի ու շինությունների՝ այդ թվում տրանսպորտային եւ ինժեներական ենթակառուցվածքների շահագործման մատչելիությունն ապահովող քաղաքաշինական միջոցառումների համալիրը (նորմերը, կանոնները), դրանց կիրառման պայմանները.

40) վարում է քաղաքաշինության բնագավառի լիցենզավորված կազմակերպությունների եւ մասնագետների էլեկտրոնային գրանցամատյանները.

41) մշակում է բնակելի, հասարակական եւ արտադրական շենքերի եւ շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը եւ բովանդակությունը, ինչպես նաեւ դրանց նպատակային (գործառնական) նշանակության դասակարգման ցանկը (մեթոդաբանությունը), շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակության եւ դրանց փոփոխման կարգերը.

42) մշակում է տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական եւ արտադրական նշանակության շենքերը եւ շինությունները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու կարգը.

43) մշակում է եւ հաստատում է շենքերի ու շինությունների անձնագրերի օրինակելի ձեւերը, անձնագրերի լրացման մեթոդաբանությունը.

44) մշակում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման եւ հաստատման կարգը.

45) մշակում է քաղաքաշինական ծրագրային եւ ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության կարգերը.

46) համակարգում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով սահմանված կառուցապատման եւ ներդրումային ծրագրերը.

47) ստեղծում է Կոմիտեի նախագահին կից գործող Քաղաքաշինական խորհուրդ.

48) ստեղծում է Կոմիտեի նախագահին կից գործող Գիտատեխնիկական խորհուրդ:~~հաստատում է քաղաքաշինական եւ գիտատեխնիկական խորհուրդների կազմը եւ աշխատակարգերը:~~»:

6. . Սույն հոդվածի 3-րդ մասի.

2) 47-րդ կետում նշված Քաղաքաշինական խորհուրդը ճարտարապետաճարտարագիտական, քաղաքաշինական համալիր խնդիրների կոլեգիալ քննարկման և գնահատման նպատակով ստեղծված խորհրդատվական մարմին է, որի կազմը և աշխատակարգը հաստատում է Կոմիտեի նախագահը.

2) 48-րդ կետում նշված Գիտատեխնիկական խորհուրդը քաղաքաշինության բնագավառի օրենսդրությամբ սահմանված նորմերի կիրառման հետ կապված գիտականորեն հիմնավորված մասնագիտական դիրքորոշումներ, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծված խորհրդատվական մարմին է, որի կազմը և աշխատակարգը հաստատում է Կոմիտեի նախագահը:»

Հոդված 3. Օրենքի ամբողջ տեքստում «քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին», «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմին» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին» բառերով՝ դրանց համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 4. Օրենքի ամբողջ տեքստում «նորմատիվ-տեխնիկական» բառերը փոխարինել «նորմատիվատեխնիկական» բառով:

Հոդված ~~4~~5. Օրենքի 17-րդ հոդվածի 10-րդ մասում «10-րդ հոդվածի «դ» կետին» բառերը փոխարինել «10-րդ հոդվածի 1-ին մասի ~~3~~2-րդ կետին» բառերով:

Հոդված ~~5~~6. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 19. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտները*

1. Քաղաքաշինական գործունեությունը ենթակա է հատուկ կարգավորման, եթե տարածքների կառուցապատումը, հատակագծումը, օգտագործումը, քաղաքացիների, հասարակության, պետության շահերի ապահովումը պահանջում է օրենսդրական լրացուցիչ լուծումներ:

2. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքների առանձնացումը որոշվում է՝ ելնելով պետության եւ հասարակության անվտանգության ապահովման, սոցիալ-տնտեսական զարգացման, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների եւ բնապահպանական հիմնահարցերի փոխկապակցված լուծման, ազգային, պատմամշակութային, քաղաքաշինական, լանդշաֆտային եւ բնապատկերային արժեքների պահպանման, բնական եւ տեխնածին երեւույթներից պաշտպանության, աղետների եւ արտակարգ իրավիճակների կանխման ու հետեւանքների վերացման անհրաժեշտությունից:

3. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանները կարող են չհամընկնել վարչատարածքային միավորների սահմանների հետ:

4. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորումը կարող է իրականացվել հատուկ քաղաքաշինական նորմերի ու կանոնների, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, համաձայնեցման եւ հաստատման, ինչպես նաեւ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգեր սահմանելու միջոցով:

5. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ կարող են առանձնացվել՝

1) Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքում.

2) Սեւանա լճի ջրհավաք ավազանի տարածքում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, ինչպես նաեւ ջրային ռեսուրսների օգտագործմանն առնչվող հիդրոտեխնիկական կառուցվածքների տարածքներում.

3) ազատ եւ հատուկ տնտեսական գոտիների տարածքներում.

4) մեկից ավելի վարչատարածքային միավորների շահերին առնչվող քաղաքաշինական օբյեկտների տարածքներում.

5) օրենքով սահմանված հատուկ նշանակության եւ հատուկ պահպանվող հողերի տարածքներում.

6) միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում:

6. Սույն հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների եւ տարածքների, այդ թվում միջպետական եւ հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների պահպանման, ինչպես նաեւ հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում եւ առանձնացման գոտիներում քաղաքաշինական գործունեության, դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման եւ նախագծային փաստաթղթերի հաստատման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված ~~6~~7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը Կառավարությունը եւ ~~Քաղաքաշինության կկ~~ոմիտեն ընդունում են՝

1) մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 30-ը, ~~եթե այլ օրենքներով ավելի վաղ ժամկետներ նախատեսված չեն:~~

2) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի մասով՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը,

3) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 21-23-րդ կետերի և սույն օրենքի 2-րդ հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 27-րդ, 31-րդ կետերի մասով՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 16-ը,

4) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 24-25-րդ կետերի և սույն օրենքի 2-րդ հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 28-30-րդ և 35-րդ կետերի մասով՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 16-ը:»

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-485-03.01.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Հոդվածի 1-ին մասի՝ 1) 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության» բառերն առաջարկվում է փոխարինել «սույն» բառով՝ ելնելով օրինականության և իրավական որոշակիության ապահովման օրենսդրական պահանջից:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			2) 7-րդ կետում առաջարկվում է ավելացնել «և» բառը, իսկ «գործառնական» բառը դուրս բերել փակագծերից՝ հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքով և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ տրված ձևակերպումներն, ինչպես նաև «կարգերը» բառը փոխարինել «կարգ» բառով՝ հաշվի առնելով, որ փոփոխությունները կատարվելու են մեկ կարգի շրջանակներում: 3) 14-րդ կետն առաջարկվում է խմբագրել. դրա 2-րդ նախադասությունը հանել և վերաձևակերպել որպես նույն հոդվածի 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ծրագրում		

			Կառավարության կողմից սահմանվում են ծրագրի հիմնական պայմանները: Այդ պայմանների կենսագործումն ապահովելու նպատակով ծրագրում նշված լիազոր մարմնի և ծրագիրն իրականացնողի միջև օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է համապատասխան պայմանագիր, որում ներառում են այդ թվում Կառավարության կողմից հաստատված ծրագրի հիմնական պայմանները և դրանց խախտման համար օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքները:»: 4) 17-րդ կետում ավելացնել «և» բառը, իսկ «գործառնական» բառը դուրս բերել փակագծերից՝ հիմք ընդունելով ՀՀ հողային		

			օրենսգրքով և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ տրված ձևակերպումները:		
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	1) հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ հոդվածի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը» բովանդակությամբ՝ այն համապատասխանեցնելով Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 10.1-ին հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասի բովանդակությանը: 2) Հոդվածի 3-րդ մասի 27-րդ կետի բովանդակությունը ձևակերպել որպես գործող օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 27-րդ կետի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նոր շարադրություն, ըստ այդմ՝ լրացվող կետերը՝ «27-47»-ի փոխարեն համարակալել «28-48»: 3) քաղաքաշինական եւ գիտատեխնիկական խորհուրդների վերաբերյալ դրույթներն իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից հստակեցնելու և այդ խորդուրդերի մասով կարգավորումներ նախատեսելու նպատակով՝ - հոդվածի 3-րդ մասի 47-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «ստեղծում է Կոմիտեի նախագահին կից գործող Քաղաքաշինական խորհուրդը.», - 3-րդ մասը լրացնել նոր՝ 48-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «ստեղծում է Կոմիտեի նախագահին կից գործող		

			Գիտատեխնիկական խորհուրդը», - հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «4. Սույն հոդվածի 3-րդ մասի. ~~2)~~3) 47-րդ կետում նշված Քաղաքաշինական խորհուրդը ճարտարապետաճարտարագիտական, քաղաքաշինական համալիր խնդիրների կոլեգիալ քննարկման և գնահատման նպատակով ստեղծված խորհրդատվական մարմին է, որի կազմը և աշխատակարգը հաստատում է Կոմիտեի նախագահը. ~~3)~~4) 48-րդ կետում նշված Գիտատեխնիկական խորհուրդը քաղաքաշինության բնագավառի օրենսդրությամբ սահմանված նորմերի կիրառման հետ կապված գիտականորեն հիմնավորված մասնագիտական		

			դիրքորոշումներ, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծված խորհրդատվական մարմին է, որի կազմը և աշխատակարգը հաստատում է Կոմիտեի նախագահը:»:		
3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3**	Օրենքի ամբողջ տեքստում «քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին», «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմին» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին» բառերով՝ դրանց	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համապատասխան հոլովածևերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:		
4.	ՀՀ կառավարություն	**Հոդված 4**	Օրենքի ամբողջ տեքստում «նորմատիվ-տեխնիկական» բառերը փոխարինել «նորմատիվատեխնիկական» բառերով, հաշվի առնելով, որ թեև նշված հասկացությունները բովանդակային առումով նույնն են, սակայն քաղաքաշինության բնագավառի օրենսդրության մեջ կիրառվում է «նորմատիվատեխնիկական» ձևակերպումը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դրանք համապատասխեցման կարիք ունեն:	Ընդունվել է:	Ընդունվել է:

5.	ՀՀ կառավարություն	**Հոդված 5**	Հոդվածում Օրենքի 17-րդ հոդվածում կատարված հղումը շտկել և «10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին» բառերը փոխարինել «10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	**Հոդված 7**	Հոդվածի 2-րդ մասի՝ օրենքից բխող ենթաօրեսդրական ակտերի ընդունման ժամկետներին առնչվող անցումային դրույթները հստակեցնելու, որոշակիացնելու և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին համապատասխանեցնելու նպատակով հոդվածի 2-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «2.Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը Կառավարությունը և կոմիտեն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ընդունում են. 1) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը, 2) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի մասով՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը, 3) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 21-23-րդ կետերի և սույն օրենքի 2-րդ հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 27-րդ, 31-րդ կետերի մասով՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 16-ը, 4) սույն օրենքի 1-ին հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 24-25-րդ կետերի և սույն		

			օրենքի 2-րդ հոդվածով նոր շարադրությամբ խմբագրվող օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 28-30-րդ և 35-րդ կետերի մասով՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 16-ը:»:		
7	ՀՀ կառավարություն	**Լրացուցիչ նախագիծ Հոդված 1.**	**Հոդված 1.** «Չեղյալ ճանաչել « «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի նոյեմբերի 16-ի ՀՕ-433 օրենքի 6-րդ հոդվածը և 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:»: 2022 թվականի նոյեմբերի 16-ին Ազգային ժողովն ընդունել է ««Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-433-Ն օրենքը (այսուհետ՝ ՀՕ-433-Ն օրենք), որն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ուժի մեջ է մտնելու 2023 թվականի դեկտեմբերի 17-ին: Հիշյալ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել **քաղաքաշինության բնագավառում Կառավարության և քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի իրավասությունների շրջանակները սահմանող՝** օրենքի 10-րդ և 10.1-րդ հոդվածներում: Հետևաբար, առաջարկվող Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի, այնուհետև ՀՕ-		

			433-Ն օրենքն ուժի մեջ մտնելու արդյունքում առաջացող իրավական խառնաշփոթը կանխելու անհրաժեշտությամբ:		